ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Երևանի պետական համալսարանի
ակադեմիական/ուսումնական գծով
պրոռեկտոր՝

Է. Ասրիյան

«30» 05 2022 թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Հրաչյա Արսենի Դանիելյանի «Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի և կրիպտոարժույթների ֆինանսական կառավարման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:
Քննարկմանը մասնակցում էին՝ «Ֆինանսահաշվային» ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Հ. Մնացականյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ. Բոստանջյանը, տ.գ.թ., դոցենտ Կ. Ներսիսյանը, տ.գ.թ., դոցենտ. Թ. Հովակիմյանը, տ.գ.թ., դոցենտ Գ. Միրոյանը, ավագ լաբորանտ Ա. Սարգսյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Թվային միջավայրում էլեկտրոնային գործարքների ֆինանսական կառավարումը առնչվում է ինչպես Կենտրոնական բանկի կողմից մշակված կանոնակարգերի բավարարման, այնպես էլ ֆինանսական կազմակերպությունների գործարար շահերի սպասարկման գործընթացներին: Մի կողմից, պետությունը ձգտում է հնարավորինս կառավարելի դարձնել էլեկտրոնային վճարահաշվարկային գործունեության համակարգային ռիսկերը, մյուս կողմից, առևտրային բանկերն ու մասնագիտացված ֆինանսական կազմակերպությունները փորձում են մրցակցային դարձնել իրենց կողմից իրականացվող վճարահաշվարկային գործարքները, և դիմում են ինովացիոն վճարային գործիքների, որոնք ֆինանսական կառավարման առանձնահատուկ մոտեցումներ են պահանջում:

Ներկայումս կարևորվում է էլեկտրոնային վճարահաշվարկային գործարքների արդյունավետության գնահատումը՝ հիմնված ոլորտի շահառուների պահանջմունքների բավարարման աստիճանի վրա: Առավել ևս արդիական է

համարվում այդ ուղղությամբ հաշվետվողականության ապահովումը: Սակայն, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործնականում էլեկտրոնային վճարահաշվարկային գործունեության հաշվետվողականությունը նպատակաուղղվում է առավելապես ֆինանսական կառավարման վերահսկողական գործառույթներին, և բնավ չի ներկայացնում ոլորտի մրցակցային միջավայրը:

Վիրտուալ միջավայրում վճարահաշվարկային գործարքների իրականացումը ձևավորում է առանձնահատուկ ռիսկեր, կապված ոչ միայն կիբեռանվտանգության ապահովման, այլև գործարքների ֆինանսական կառավարման հետ: Հատկապես, ներկայումս կարևորվում են քարտային ծառայությունների ծածկույթի, վճարային գործարքների ֆինանսական պաշարների ապահովվածության, ֆինանսական կազմակերպությունների կապիտալի համարժեքության ռիսկերը, որոնք կառավարման առանձնահատուկ մոտեցումներ են պահանջում և դրանց գծով իրականացվում են օպերատիվ կառավարչական որոշումներ:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակն է մշակել էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգիերի ֆինանսական կառավարման մոտեցումների բարելավման գիտական ուղղություններ:

Ելնելով հետազոտության նպատակից, առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծել էլեկտրոնային վճարման գործիքակազմի ընդլայնման շարժառիթները և զարգացման միտումները ոչ միայն ազգային, այլև միջազգային հարթություններում,
- ներկայացնել վճարահաշվարկային համակարգի ֆինանսական վերահսկողության և հաշվետվողականության բարելավման մոտեցումներ, որոնք ձևավորվում են ոլորտի շահառուների սպասումներով,
- մշակել էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի գործունեության ֆինանսական ռիսկերի կառավարման այնպիսի մոտեցումներ, որոնք հիմնված կլինեն ռիսկերի բազմագործոնային չափման միասնական համակարգի վրա,
- վերլուծել կրիպտոարժույթների շրջանառության և պետական վերահսկողության շրջանակներում գտվնող էլեկտրոնային փողերի թողարկման գործընթացների փոխազդեցության շրջանակը,
- ներկայացնել առաջարկություններ փողի զանգվածի որոշման բարելավումների ուղղությամբ, որոնք հաշվի կառնեն կրիպտոարժույթների ապակենտրոնացված շրջանառությունը,
- առաջարկել տնտեսության կրիպտոլիզացիայի վերահսկողության մոտեցումներ, հաշվի առնելով փողի զանգվածում կրիպտոարժեքների ընդունելի ցուցիչներ և էլեկտրոնային փողերի շրջանառության արդյունավետության ուղիներ:

Ատենախոսության գիտական նորույթը

Հետազոտության գիտական նորույթը ՀՀ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի կառավարման բարելավման գծով առաջարկությունների ներկայացումն է: Մասնավորապես.

- մշակվել են էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի գործունեության ֆինանսական ռիսկերի գնահատման մոտեցում կիրառելով ռիսկային գործոնների չափելիության միասնական համակարգ և շահառուների նպատակաղրումներից հավանական կորուստների որոշման համապարփակ ցուցանիշներ,
- էլեկտրոնային վճարման գործիքակազմի ընդլայնման շարժառիթների և զարգացման միտումների ուսումնասիրության հիման վրա առաջարկվել են վճարահաշվարկային համակարգի ֆինանսական վերահսկողության և հաշվետվողականության բարելավման մոտեցում հիմնված ոլորտի շահառուների պահանջմունքների բավարարվածության աստիճանի վրա,
- ֆինանսական շուկայում կրիպտոարժույթի շրջանառության վերլուծությունների հիման վրա առաջարկվել են տնտեսության կրիպտոլիզացիայի վերահսկողության մոտեցում՝ ընդլայնելով փողի զանգվածի բնութագրման որակական ցուցիչները և էլեկտրոնային փողերի շրջանառության արդյունավետության գնահատումները,

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, առաջադրվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, սահմանվել են օբյեկտն ու առարկան, տրվել են աշխատանքի տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են ատենախոսության գիտական արդյունքներն ու նորույթը, ներկայացվել են արդյունքների տեսական ու կիրառական նշանակությունը, արդյունքների փորձարկումն ու հրապարկումները և տրվել է աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին «Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի էվոլյուցիան և արդի մարտահրավերները» գլխում քննարկվում են էլեկտրոնային վճարային համակարգերի գործունեությունը և կառուցվածքային առանձնահատկությունները:

Վճարային գործիքակազմի էվոլյուցիան փողի վերափոխումների և դրանց նյութական ու ոչ նյության կրիչների, ինչպես նաև վճարահաշվարկային միջավայրի փոխակերպումների հետ է պայմանավորված: Այս համախմբում առանցքային է համարվում ոչ թէ կրիչը, որը ներկայանում է որպես վճարման գործիքի ձև, այլ վճարահաշվարկային միջավայրը, որը վճարային գործիքների բովանդակային մասն է ապահովվում: Այս առումով էլեկտրոնային վճարային գործիքների էվոլյուցիան սերտ առնչությունը ներկայացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և վճարային միջավայրի վիրտուալիզացիայի հետ:

Ատենախոսության երկրորդ «Կրիպտոարժույթների շուկայի ֆինանսական կառավարման հիմնախնդիրները» գլխում վերլուծվում է կրիպտոարժույթների թողարկման և շրջանառության կարգավորման հիմնախնդիրների շրջանակը:

Կրիպտոարժույթները ձևավորվեցին թվային տնտեսության, էլեկտրոնային գաղտնագրության և օգտատերերի պահանջմունքների փոփոխության հատույթում: Եվ դա է պատճառը, որ կիրպտոարժույթների կիրառման կարգավորումները ապակենտրոնացվեցին և մեկնարկեցին ոչ թե վերևից պետության կողմից, այլև ներքևից՝ կրիպտոանձերի համայնքի կողմից:

Ընդհանուր առմամբ, կրիպտոարժույթների «ինտերվենցիան» ավանդական փողերի շրջանառության ոլորտ պետք սահմանափակ լինի, քանի որ կրիպտոանձերի կողմից այդ արժույթի «ներքևից» ապակենտրոնացված կառավարումը կրում է բազում ռիսկեր, որոնք զանգվածային ներթափանցումը կենտրոնացված կառավարվող փողի զանգված, կարող է առաջացնել դրամավարկային էկոհամակարգի խաթարման ռիսկեր՝ կրիպտոարժույթների գնային կտրուկ տատանումների, կիբեռանվտանգության խաթարումների, անկառավարելի մայնինգի պատճառներով: Ուստի առաջարկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանելու փողի զանգվածի թույլատրելի կրիպտոլիզացիայի աստիճան և դրանով իսկ սահմանափակումների գործիքակազմ կիառել:

Ատենախոսության երրորդ «Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի ֆինանսական կառավարման հայեցակարգային մոտեցումները» գլխում քննարկվում են ռիսկերի կառավարման հիմնախնդիրները էլեկտրոնային վճարահաշվարկային գործարքներում:

Ընդհանուր առմամբ, էլեկտրոնային վճարահաշվարկային գործարքների ռիսկերը առաջարկվում է խմբավորել չորս ուղղություններով, ինչպիսիք են ֆինանսականը, գործառնականը, կիբեռանվտանգությունը և համակարգայինը, որոնք շղթայապես փոխկապակցված են և ներազդում են միմյանց:

Հաշվի առնելով էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի գործունեությանն առնչվող ռիսկերը, առաջարկվում է ռիսկերի բազմագործոնային գնահատման մոտեցում, հիմնված նպատակադրումների և դրանցից բխող բացասական շեղումների վրա:

Հետադարձ կապով շահառուներից էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայությունների արդյունքների գնահատման հիման առաջարկվում է կազմել վարկանիշային աղյուսակներ, որոնք կլրացնեն Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող հաշվետվությունները և մաս կկազմեն հաշվետվական գործընթացի: Կարևորվում է, թե ինչպես է արձագանքում մրցակցային շուկան վճարահաշվարկային գործունեություն ծավալող կազմակերպությունների աշխատանքի որակին, որը բնավ չի արտացոլվում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրատարակված հաշվետվություններում:

Եզրակացություններ բաժնում ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ որոշակի թերացումներից, որոնց վերաբերյալ կարելի է նշել հետևյալ դիտողությունները.

1. Ատենախոսության պարագրաֆ 1.2-ում մանրամասն վերլուծության են ենթարկվում էլեկտրոնային փողերի զարգացման փուլերը և անգամ ատենախոսի կողմից այդ ուղղությամբ կատարվում են առաջարկություններ: Սակայն հաջորդիվ պարզ դի չադառնում, թե ինչու համար են կատարվել այդ առաջարկությունները, նամանավանդ, որ դրանք չեն փռխկապակցվում հետազոտության գիտական նորույթի հետ:

2. Ատենախոսության մեջ մի շարք փաստեր հիմնված են հին տեղեկատվության վրա: Մասնավորապես հեղինակի կողմից ներկայացված էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայությունների պետական կարգավորման սինգապուրյան մոդելը ու դրանում առկա տվյալները հիմնված են հին՝ 2006թ-ի ակտի վրա: Մինչդեռ, ներկայումս ոլորտը կարգավորվում է 2019թ.-ին ընդունված «Վճարման ծառայությունների» ակտի հիման վրա:

3. Ատենախոսության 2.1 ենթագլխի 2.1.1 աղյուսակում ներկայացված կրիպտոարժույթի գնային փոփոխման միտումները թերի են արտացոլում իրական տենդենցները և պատկերը: Ցանկալի կլիներ, որ ատենախոսության մեջ վերլուծության համար ներկայացվեին մինչև 2021թ-ը ներառյալ ամսական կտրվածքով տվյալները, որը հնարավորություն կընձեռեր ստանալ ավելի ամբողջական պատկեր և դիտարկել կրիպտոարժույթների տատանումները:

4. Ատենախոսության 3.3 ենթագլխում, հեղինակի կողմից ներկայացված վճարահաշվարկային գործառույթներ իրականացնող ֆինանսական կազմակերպությունների տարբեր ուղղություններով գործունեության գնահատումների մեթոդաբանությունը և եղանակները հստակ չեն: Մասնավորապես, հստակ չի ներկայացված, թե ինչի՞ հիման վրա են ընտրվել աղյուսակ 3.1.1 (ամենայն հավանականությամբ պետք է լիներ 3.3.1, էջ 93) ցուցանիշները և դրանց գնահատման համար կիրառված կշիռները:

5. Հաշվի առնելով վերջին շրջանում լայն տարածում ստացած զեղծարարությունները էլեկտրոնային և վճարային համակարգերի օգտագործման հետ կապված՝ հեղինակը ատենախոսության մեջ շատ մակերեսային է անդրադարձել գործառնությունների

անվտանգության պահպանման և դրա բարձրացման հիմնախնդիրներին: Մինչդեռ ատենախոսության հիմնական խնդիրներից է հանդիսանում էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի գործունեության ֆինանսական ռիսկերի կառավարման մշակումը:

Եզրակացություն

Արված դիտողությունները չեն ազդում հետազոտության արդյունքների վրա և չեն նվազեցնում աշխատանքի գիտական արժեքը:

Հ. Դանիելյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որում դրված և լուծված են կազմակերպությունների իրացվելիության վերլուծության և վերահսկողության մեթոդների կատարելագործմանն ուղղված հարցերը: Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Հրաչյա Արսենի Դանիելյանի «Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի և կրիպտոարժույթների ֆինանսական կառավարման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ,
տ.գ.դ. պրոֆեսոր՝ Հ.Գ. Մնացականյան

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ
տ.գ.թ.՝ Գ. Ա. Սիրոյան

Ստորագրությունները հաստատում եմ
ԵՊՀ գիտքարտուղար՝ բ.գ.թ. Մ.Վ.Հովհաննիսյան